ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/6» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 25.05.2018թ.
ժ. 11[00]

Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետ, գնդապետ Հ.Կարապետյան(ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Խ. Երիցյան
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վաչչության ՀՕՊ, ՌԵՊ, կապի և ավիացիոն միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ռ. Զադոյան
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան:
Բացակայում է՝
ՀՀ ՊՆ ՌՈ հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, մայոր Հ. Բարսեղյանը

Գնումների համակարգող՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի ծառայող Վ. Սահակյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Վ. Սահակյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Վ. Սահակյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը և տեխնիկական բնութագրերը առկա են և համապատասխանում են գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին: «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին «Ավանգարդ», «Էյչ Գրուպ», «Հենրի Ռադիո», «Մեգա Էներգո», «Մովսեսյան», «Յուտեկ», «Պիպաս Ֆուդ» և «Տոպազ-95» ՍՊԸ-ների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը և տեխնիկական բնութագրերը թերի են:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է

նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները: «Ավանգարդ», «Էյչ Գրուպ», «Հենրի Ռադիո», «Մեգա Էներգո», «Մովսեսյան», «Յուտեկ», «Պիպաս Ֆուդ» և «Տոպազ-95» ՍՊԸ-ները սահմանված ժամկետում շտկել և ներկայացրել են շտկված տարբերակները:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիների Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, բացի «Պիպաս Ֆուդ» ՍՊԸ-ից, որն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց պարտավորություն 17 300 (տասնյոթ հազար երեք հարյուր) ՀՀ դրամի չափով: ***06.06.2018թ.*** Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետի պահանջները՝ որոշեց «Պիպաս Ֆուդ» ՍՊԸ-ի տվյալները ուղարկել լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն երեք աշխատանքային օրվա ընթացքում չներկայացնեն լրացուցիչ տվյալներ:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ 06.06.2018թ. «Պիպաս Ֆուդ» ՍՊԸ-ի հայտը մերժվեց, ինչի արդյունքում ընթացակարգի 21-րդ չափաբաժնում առաջին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն, 22-րդ, 48-րդ, 49-րդ, 50-րդ, 84-րդ չափաբաժիններում առաջին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Յուտեկ» ՍՊԸ-ն, 23-րդ չափաբաժնում առաջին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Մեգա Էներգո» ՍՊԸ-ն: Հաշվի առնելով վերոգրյալը հանձնաժողովը որոշեց առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

1.2 Քանի որ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն մինչ այդ առաջին տեղ զբաղեցնող չէր ճանաչվել և «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի մասով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում չէր ներկայացվել, հանձնաժողովը որոշեց. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի *«Ֆինանսական միջոցներ»* որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ըստ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած տվյալների «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

1.3 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին «Տիգման գրուպ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում և տեխնիկական բնութագրերում առկա են անհամապատասխանություններ: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

Սահմանված ժամկետում «Տիգման գրուպ» ՍՊԸ-ն շտկել է անհամապատասխանությունները և ներկայացրել գնահատող հանձնաժողովին: Հանձնաժողովը «Տիգման գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը ընդունել է որպես հետագա գնահատման համար ընդունելի:

1.4 Շարունակելով աշխատանքները 18.06.2018թ. և հիմք ընդունելով գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Ավանգարդ», «Էյչ գրուպ», «Հենրի Ռադիո», «Մովսեսյան», «Մաժէվ», «Յուտեկ», «Տոպազ-95», «Տիգման Գրուպ», «Մեգա Էներգո», ՍՊԸ-ների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/6»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից 1-ին և 75-րդ չափաբաժիններում ***«Մաժէվ»*** ՍՊԸ-ին: 2-րդ, 6-րդ, 10-րդ, 29-րդ, 30-րդ, 43-րդ, 46-րդ, 53-րդ, 55-րդ, 56-րդ, 57-րդ, 58-րդ, 59-րդ, 60-րդ, 68-րդ, 79-րդ, 85-րդ, 87-րդ չափաբաժիններում ***«Ավանգարդ»*** ՍՊԸ-ին, 7-րդ, 11-րդ, 24-րդ, չափաբաժիններում ***«Էյչ գրուպ»*** ՍՊԸ-ին, 26-րդ, 38-րդ, 39-րդ, 40-րդ, 42-րդ, 69-րդ, 70-րդ, 72-րդ, չափաբաժիններում ***«Հենրի ռադիո»*** ՍՊԸ-ին, 4-րդ, 5-րդ, 8-րդ, 13-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 23-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 44-րդ, 67-րդ, 74-րդ, 76-րդ, 86-րդ չափաբաժիններում ***«Մեգա Էներգո»*** ՍՊԸ-ին, 12-րդ, 25-րդ, 27-րդ, 28-րդ, 45-րդ, 47-րդ, 52-րդ, 66-րդ, 71-րդ, չափաբաժիններում ***«ՄՈՎՍԵՍՅԱՆ»*** ՍՊԸ-ին, 3-րդ, 9-րդ, 14-րդ, 20-րդ, 22-րդ, 31-րդ, 32-րդ, 41-րդ, 48-րդ, 49-րդ, 50-րդ, 51-րդ, 61-րդ, 62-րդ, 63-րդ, 64-րդ, 65-րդ, 73-րդ, 77-րդ, 78-րդ, 80-րդ, 81-րդ, 82-րդ, 83-րդ և 84-րդ չափաբաժիններում ***«Յուրեկ»*** ՍՊԸ-ին, ՍՊԸ-ին, 54-րդ չափաբաժնում ***«Տոպազ 95»*** ՍՊԸ-ին, 21-րդ չափաբաժնում ***«Տիգման Գրուպ»*** ՍՊԸ-ին :

1.5 Հանձնաժողովը որոշեց հաստատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/6»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Վ. Սահակյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Կ. Կարապետյան

Գնահատող Խ. Երիցյան

Գնահատող Ռ. Զադոյան

Գնահատող Կ. Բրուտյան

Գնումների համակարգող՝ Վ. Սահակյան